ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2013 թվականի ապրիլի 30-ին

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի փետրվարի 8-ի ՀՕ-19-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 4-րդ մասի «համապատասխանության գնահատման ընթացակարգերի» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման գործընթացի» բառերով:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) **համապատասխանության գնահատում՝** գործընթաց, որով հավաստվում է արտադրանքին, գործընթացին, համակարգին, անձին կամ մարմնին ներկայացվող պահանջների իրականացումը՝ փորձարկման և (կամ) սերտիֆիկացման և (կամ) հայտարարագրման և (կամ) տրամաչափարկման և (կամ) տեխնիկական հսկողության իրականացման միջոցով.».

2) 17-րդ կետի «համապատասխանության գնահատման սխեմա» բառերը փոխարինել «համապատասխանության գնահատման ընթացակարգ» բառերով.

3) 19-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«19) **համապատասխանության գնահատման գործընթաց՝** գործընթաց, որն իրականացվում է որոշելու համար համապատասխան տեխնիկական կանոնակարգերով և (կամ) միջազգային և (կամ) ազգային ստանդարտներով սահմանված պահանջների կատարման ապահովումը.»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի «և կանոնակարգվող ոլորտների» բառերը հանել:

Հոդված 4. Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին մասով.

«8.1. Համապատասխանության գնահատման նշանակված մարմինները վճարում են պետական տուրք՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն:»:

Հոդված 5. Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

2013թ. մայիսի 25
Երևան
ՀՕ-41-Ն

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ
№ 2
ԲԱԺԻՆ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԻՄՔ
2
«03 06 13
Մուտք № 5255
ՀԱՆՁՆՎԱԾ